

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ստեփանակերտ- 2008

Բովանդակություն

Նախաբան.....	3
1.Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում.....	4
2.Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում, սակագնային քաղաքականություն, կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....	5
3.Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում.....	6
4.Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը.....	7
5.Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները	9
6.Սպառողների հետ տարվող աշխատանքներ.....	10
7. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ.....	10
8.Համագործակցություն.....	10
9. ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009թ. նիստերի անցկացման աշխատանքային ծրագիր (Աղյուսակ 2).....	12

Նախաբան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցություն), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման, տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է հավասարակշռել սպառողների ու ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

- կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից,
- կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը,
- կարգավորման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը

հասարակության համար,

• սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը,

• սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը,

• մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց կարգավորման

շրջանակների սահմանափակումը:

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում ունի գործունեության հետևյալ շրջանակները՝

ա) հակամրցակցային համաձայնություններ,

բ) մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահում,

գ) համակենտրոնացում,

դ) անբարեխիղճ մրցակցություն,

ե) պետական օժանդակություն:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- սակագնային քաղաքականության և ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական, մեթոդաբանության, հետազոտությունների բաժին,
- լիցենզավորման, մոնիթորինգի և վերահսկողության բաժին,
- վարչատնտեսական բաժին:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է: Հանձնաժողովի կարգավորման դաշտում ընդգրկված են տարբեր բնագավառներ, որոնց կարգավորման ենթակա խնդիրները տարաբնույթ են: Հետևաբար յուրաքանչյուր բնագավառում առկա խնդիրներին համապատասխան օրենսդրական դաշտի և կարգավորման կանոնների սահմանումը կնպաստի միայն կարգավորվող ընկերությունների և սպառողների շահերի հավասարակշռմանը:

Հեռահաղորդակցության բնագավառը ներկայումս Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է:

Հանձնաժողովը նախատեսում է 2009 թվականի ընթացքում գործունեություն ծավալել հետևյալ ուղղություններով՝

- հանրությանը մատչելի էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում,

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում մրցակցության զարգացում,

- լիցենզավորված անձանց՝ օրենսդրության և լիցենզիայի (թույլտվության) պահանջների կատարման ընթացքի մոնիթորինգ, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցերի ոլորտում մրցակցության որևէ աղավաղման բացառում,

- սահմանափակ ռեսուրսների, ներառյալ՝ ռադիոհաճախականությունների տիրույթի և համարների արդյունավետ օգտագործման ապահովում,

- էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում գործունեություն ծավալելու ընթացակարգերի պարզեցում,

- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումները խթանող իրավական դաշտի զարգացում,

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների գործունեության որակի չափանիշների սահմանում, որոնք, ծառայությունների և ցանցերի ոլորտում ապահովելով բարեխիղճ մրցակցություն, հնարավորություն կտան աստիճանաբար մոտենալու հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում առաջատար դիրք զբաղեցնող երկրներին,

- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի չափանիշների սահմանում, որոնք, հիմնված լինելով հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրությանը սպասարկելու համաշխարհային լավագույն փորձի վրա, կնպաստեն հանրապետության բնակչության սպասարկման որակի բարելավմանը:

Ելնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման պետական քաղաքականության նպատակներից՝ Հանձնաժողովը կօգտագործի լիցենզավորման, ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման, շուկայական մրցակցության պաշտպանության և ոլորտի առանձին հատվածների կարգավորման մեխանիզմները: Այդ նպատակներն իրականացվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության շուկայի առանձնահատկությունների և իրավիճակի հաշվառումով:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորումը կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

ա) շուկայի ուսումնասիրություն, որի համար՝

- ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության և հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում առաջատար դիրք զբաղեցնող երկրների էլեկտրոնային հաղորդակցության շուկաների համեմատական վերլուծության արդյունքները՝ կնախանշվեն շուկայի զարգացման հիմնական ուղղությունները:

բ) լիցենզավորում (ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրում), որն իրականացվելու է՝

- լիցենզավորման ընթացակարգի պարզեցմամբ՝ լիցենզավորման համար նախատեսված պայմանների շրջանակը սահմանափակելով օրենքով սահմանված պայմանների նվազագույն ծավալով:

գ) ռադիոհաճախականությունների տիրույթի կառավարում, որն իրականացվելու է՝

- մշակելով ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ օգտագործման ճկուն քաղաքականություն,

- սահմանելով ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման ողջամիտ վճարներ,

- ռադիոհաճախականությունների տիրույթի ազատականացմամբ (կոնվերսիա), որը կնպաստի էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների իջեցմանը և բնագավառում նոր տեխնոլոգիաների ներդրմանը,

դ) շուկայական մրցակցության պաշտպանության ապահովում:

Պարբերաբար կկատարվեն հետազոտություններ՝ էլեկտրոնային հաղորդակցության շուկայում մրցակցային իրավիճակը գնահատելու և հնարավոր հակամրցակցային երևույթները բացահայտելու և դրանք վերացնելու համար:

ե) համընդհանուր (ուճիվերսալ) ծառայությունների ապահովում, որի համար նախատեսվում է՝

- մանրամասն ուսումնասիրել էլեկտրոնային հաղորդակցության շուկայի (բնակչության մասնավոր և հանրային հատվածի) կարիքները՝ համընդհանուր ծառայությունների արդյունավետ մոդել մշակելու նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետագա զարգացումը պայմանավորված է նաև ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչը ենթադրում է հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայություն, մասնավորապես, ինտերնետ հասանելիություն: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի հանրապետությունում ինտերնետ հասանելիության ծառայության բարելավման հարցը: Հանձնաժողովի կողմից կխրախուսվեն ընկերությունների այն նախաձեռնությունները, որոնք միտված կլինեն տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

2009 թվականին նախատեսվում է լրամշակել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները՝ հստակեցնելով բազմաբնակարան շենքերի բնակարանների և կազմակերպությունների գազի ֆիկացման ընթացակարգերը, սահմանելով սպառողների սպասարկման որակի ապահովմանն ուղղված մատակարարին ներկայացվող պահանջները:

Նպատակ ունենալով ընդլայնելու Հանձնաժողովի անկախության մակարդակը՝ Հանձնաժողովն ակնկալում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» ԼԴՀ օրենքի այն դրույթները, որոնք տաբերվում են ՀՀ համապատասխան հանձնաժողովների մասին օրենքներից, համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների դրույթներին, մասնավորապես, Հանձնաժողովի ֆինանսավորման, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների ու աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման կարգի մասով:

2009 թվականին Հանձնաժողովը կմասնակցի կարգավորման բնագավառի օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացմանը:

2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում, սակագնային քաղաքականություն, կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Հանձնաժողովը 2009թ. կիրականացնի լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման գործընթաց՝ կատարելագործելով կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռման, նրանց համար գործունեության միատեսակ պայմանների ապահովման մեխանիզմները:

2009 թվականին Հանձնաժողովը կիրականացնի տարեկան պետական տուրքերի և վճարների գանձման ապահովման գործընթաց:

Հանձնաժողովի կողմից ծրագրավորված սակագնային քաղաքականությունը

նպատակաուղղված է բնագավառի կարգավորվող ընկերությունների բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, սպառողների և ընկերությունների շահերի հավասարակշռմանը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ կճշտվի հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2009թ. անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափը:

2009թվականին Հանձնաժողովը մեծածավալ աշխատանքներ կկատարի սակագների կարգավորման ուղղությամբ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, լինելով Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ոչ միայն ընկերությունների, այլև տվյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը, ինչպես նաև սակագների սահմանմանն ու վերանայմանը, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատմանը, լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Վերոհիշյալը էապես կնպաստի կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան 2009 թվականին:

Առաջիկա տարում աշխատանքներ կտարվեն ինչպես սակագների սահմանման, այնպես էլ գործող սակագնային քաղաքականությանը վերաբերող մեթոդաբանությունների և ընկերությունների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերի լրամշակման և արդիականացման ուղղությամբ:

3. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

2009 թվականին Հանձնաժողովը կշարունակի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը, կսահմանվեն կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների վերահսկողության աշխատանքները, ինչպես նաև սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևերը և բազիսային ցուցանիշները:

2009թվականին կմշակվեն բնական զգալի մատակարարման համակարգում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը: Ստեղծվող տեղեկատվական բազան թույլ կտա սահմանել սպասարկման որակի բազիսային ցուցանիշներ և հետագայում վերահսկել դրանց պահպանումը:

Փոքր հիդրոէլեկտրոկայանների բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կմշակվի խրախուսման քաղաքականություն՝ բնագավառում կայուն աճի տեմպեր ապահովելու համար:

2009 թվականին Հանձնաժողովը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը բնագավառի զարգացման տեմպերն ապահովելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

4. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում ունի գործունեության հետևյալ շրջանակները՝

- ա) հակամրցակցության համաձայնություններ,
- բ) մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահում,
- գ) համակենտրոնացում,
- դ) անբարեխիղճ մրցակցություն,
- ե) պետական օժանդակություն:

Այս բնագավառում Հանձնաժողովի խնդիրներն են՝

- ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը,

- բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը,
- հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը,

- տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, 2009 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականություն հետևյալ ուղղություններով.

1. Ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում:

2. Մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում:

3. Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում:

4. Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն:

5. Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում:

6. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ապահովում:

7. Ապրանքային շուկաների մուտքի խոչընդոտների հայտնաբերում և շուկայի հասանելիության ապահովում:

8. Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում:

9. Ջանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում:

10. Պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների բացահայտում և դադարեցում:

11. Արգելվող պետական օժանդակության հայտնաբերում:

12. Հասարակության տեղեկացվածության բարձրացում:

13. Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում:

Նշված ուղղությունների իրականացման ապահովման նպատակով Հանձնաժողովը 2009 թվականին նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

h/h	Միջոցառում	Ժամկետ
1.	Տեղեկատվական բազայի ընդլայնում	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում,	տարվա ընթացքում
	ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	
2.	Չականրցակցային համաձայնությունների հայտնաբերում	
	իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում,	տարվա ընթացքում
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում,	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն,	
	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն:	
3.	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաչափումների հայտնաբերում	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանման կամ կիրառման կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում,	տարվա ընթացքում
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում,	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելուն) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	Չանակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ստացում:	տարվա ընթացքում
5.	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում,	տարվա ընթացքում
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՁԼՍ հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում,	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերմանն ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
6.	Չանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ապահովում	
	Չանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և մրցակցային քաղաքականության կիրարկման ուղղությամբ պարզաբանման աշխատանքների իրականացում	տարվա ընթացքում
	Չանձնաժողովի որոշմամբ դադարեցման ենթակա գործողությունների հայտնաբերմանն ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
7.	Ապրանքային շուկաների մուտքի խոչընդոտների հայտնաբերում և շուկայի հասանելիության ապահովում	

	պետական կառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող որոշումների դիտանցում,	տարվա ընթացքում
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն,	
	Օրենքով վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից ստեղծվող խոչընդոտների ուսումնասիրություն:	
8.	<i>Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում</i>	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում:	տարվա ընթացքում
9.	<i>ԶԼՍ հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում</i>	տարվա ընթացքում
10.	<i>Պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների բացահայտում և դադարեցում</i>	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումների ուսումնասիրություն,	տարվա ընթացքում
	Օրենքին հակասող գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը,	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում:	
11.	<i>Տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանն ուղղված պետական օժանդակության հայտնաբերում</i>	տարվա ընթացքում
12.	<i>Հասարակության տեղեկացվածության բարձրացում</i>	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում,	տարվա ընթացքում
	տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ հրապարակային բացատրական աշխատանքների իրականացում,	
	զանգվածային լրատվության միջոցներով Օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում,	
	ինտերնետային ցանցում on-line ռեժիմով դիմումներին և բողոքներին արձագանքում	
13.	<i>Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակումներ</i>	
	Օրենսդրական դաշտի բարելավում,	տարվա ընթացքում
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում,	
	Եվրոպական մրցակցային օրենսդրության հետ ԼՂՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման հետ կապված գործողությունների իրականացում:	

Հանձնաժողովի կողմից նշված միջոցառումներն իրականացվելու են հիմնականում Հանձնաժողովի տրամադրության տակ առկա տեղեկատվության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսվարող սուբյեկտների հարցադրումների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

5. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովվելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառնություններից, Ծրագիրն իրականացվում է նաև մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Ապրանքային շուկաներում Օրենքի դրույթների խախտումների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ Օրենքի խախտումների վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքման միջոցով:

2. Օրենքի խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառման անխուսափելիության մթնոլորտի ձևավորում:

3. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնտեսական մրցակցության հարցերին առնչվող՝ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

4. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

- համապատասխան հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման, պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, մամուլի ասուլիսների, ՁԼՄ-ների հետ համագործակցության, Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրային և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

6. Դատավորների ու դատական համակարգի ծառայողների տեղեկացվածության բարձրացում՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների միջոցով՝ նվիրված օտարերկրյա (առանձնապես՝ եվրոպական) պետություններում մրցակցային գործերի քննության կարգին և ձևավորված պրակտիկային:

6.Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովը, ղեկավարվելով ԼՂՀ համապատասխան օրենքներով, անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

Կարգավորվող անձանց հետ համատեղ, հասարակական կազմակերպությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ կկազմակերպվեն սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

7. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ

2009 թվականին Հանձնաժողովը ջանքեր կգործադրի թափանցիկ և հրապարակային գործունեության, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության ճանապարհով նպաստելու հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը: Հանձնաժողովը թերթերով, հեռուստատեսությամբ, էլեկտրոնային լրատվամիջոցներով կծանուցի Հանձնաժողովի նիստերի մասին, իսկ դրանց ավարտից հետո կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվեն ճեպագրույցներ:

8. Համագործակցություն

Միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2009 թվականին կիրականացնի իր մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացներ, ինչպես նաև կհամագործակցի ՀՀ համապատասխան կարգավորող

մարմինների և այլ պետությունների կարգավորող մարմինների հետ:

Որպես գործընկերներ կհամագործակցի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Համաշխարհային բանկի (WB), Հայաստանում և Վրաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության (EC), ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով Հանձնաժողովի (UNCTAD), Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (ԱԵՊԼԱՑ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցային հարցերով Բուդապեշտի տարածքային կենտրոնի (OECD & RCC OECD) հետ:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2009թ. նիստերում քննարկվելիք հարցերի վերաբերյալ**

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Աղյուսակ 2

Չ/Չ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին	2009թ.
2.	ԼՂՀ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին	2009թ.
3.	Հակամրցակցային համաձայնությունների որոշման կարգի մասին	2009թ.
4.	Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում սակագների սահմանման և վերանայման կարգը	2009թ.
5.	Էլեկտրական էներգիայի ներկրման կարգի մշակում	2009թ.
6.	Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների սահմանման ,այդ չափանիշների մոնիթորինգի կարգը և ծառայությունների մատուցման որակի չափանիշների ներդրման և մոնիթորինգի ժամանակացույցը հաստատելու մասին	2009թ.
7.	ԼՂՀ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին	2009թ.
8.	Ջրային ոլորտում մատակարար-բաժանորդ պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին	2009թ.
9.	Էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման և վերանայման կարգը հաստատելու մասին ԼՂՀ ՀԾՏԱԿՊՀ –ի կողմից ընդունված թիվ 23Ն որոշման մեջ փոփոխություն	2009թ.

	կատարելու մասին	
10.	Կարգավորվող ընկերությունների գնումների կարգերի լրամշակում	2009թ.
11.	Գործող էլեկտրոնային հաղորդակցության ցանցեր շահագործող և էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց միասնական տեղեկատվական բազայի մշակում և ներդրում	
12.	Համընդհանուր ծառայությունների նվազագույն քանակի, մատուցման պայմանների և համընդհանուր ծառայությունների հիմնադրամ ստեղծելու մասին տեղեկանքի մշակում	2009թ.
13.	Համարներ և կոդեր զբաղեցնող լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևերի մշակում	2009թ.
14.	Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պատժամիջոցների կիրառման կարգի մշակում և հաստատում	2009թ.
15.	ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ –ի 2007 թ. նոյեմբերի 27-ի N 19Ն «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին » որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին	2009թ.
16.	Մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող ռադիոհաճախականությունների ցանկի մշակում	2009թ.
17.	Հեռախոսային (ձայնային) ծառայությունների մատուցման նոր կանոնների մշակում և հաստատում	
18.	Հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերի լրամշակում	2009թ.
19.	Ռադիոհաճախականությունների տիրույթն օգտագործելու թույլտվություն ունեցող անձանց գրանցամատյանի ձևի մշակում և հաստատում	2009թ.

Հանձնաժողովի բնականոն աշխատանքն ապահովելու, ինչպես նաև Հանձնաժողովի անկախության մակարդակը բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ԼՂՀ «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» օրենքը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքի դրույթներին: ՀՀ օրենքով մշակված է այնպիսի մի մեխանիզմ, որը թույլ է տալիս հիմնական ներդրումը կատարել մարդկային ռեսուրսի վրա, ինչի արդյունքում ստեղծվել է ուժեղ և բանիմաց կոլեկտիվ, որն ի վիճակի է իրականացնելու պետական քաղաքականությունն այդ բնագավառում: ՀՀ «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված է Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի անհամեմատ բարձր աշխատավարձ՝ համեմատած մյուս պետական կառույցների աշխատակիցների հետ: Այդ հանգամանքը բարձր պատասխանատվություն է առաջացնում աշխատակիցների մեջ, կասեցնում է որակյալ մասնագետների արտահոսքը Հանձնաժողովից, նվազեցնում կորուպցիայի դրսևորման հնարավորությունը, ավելացնում մարդկային ռեսուրսի վրա կատարված ներդրումների արդյունավետությունը:

Հանձնաժողովը համապատասխան շենքային պայմաններ չունի աշխատանքները կազմակերպելու համար: Բացակայում է նիստերի անցկացման համար դահլիճը, ինչը խանգարում է օրենքով նախատեսված ձևով նիստերի անցկացմանը:

Հանձնաժողովի արդյունավետ աշխատանքը նպաստավոր պայմաններ կստեղծի ներդրումների, ինչպես նաև տնտեսության արդյունավետության աճի համար: